ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ
(IX ԴԱՐԻ 30—60-ԱԿԱՆ թթ.)

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բյուզանդացի մատենագիր Գենեսիոսը ուշագրավ վկայություն ունի Բյուզանդիայի դեմ կատարած արշավանքին Աբբասյան խալիֆայության զորքի կազմում Արծրունյաց զորուժի մասնակցության մասին։ Բագրատունիների գլխավորած հայկական զորքի մեջ մատենագիրը հիշատակում է «Վասպուրականցու գլխավորած զորքը»[1]։ Այս անցքը դրվում է 838 թ.[2]։ Կայսրության դեմ Աբբասյանների նշված արշավանքը պատասխան էր նախորդ տարում դեպի Հայաստան՝ Եփրատի հովիտ բյուզանդացիների կատարած հարձակման[3]։ Գենեսիոսի վկայությունը ցույց է տալիս, որ Արծրունիները նույն ժամանակ կողմնորոշվել են դեպի Աբբասյանները, Բագրատունիների հետ միասին զինակցել նրանց, ընդդեմ Բյուզանդիայի։ Սակայն Գենեսիոսը չի հիշում վերը նշված վասպուրականցի իշխանի անունը։ Իհարկե, կասկածից վեր է, որ պատմիչն ի նկատի ունի Արծրունյաց գահերեցին։ Անշուշտ, Արծրունիների այսպիսի դիրքորոշումն ուներ իր շարժառիթները։ Թեև Աբբասյան խալիֆաները, համեմատած Օմայանների հետ, ավելի անհանդուրժող էին հայ իշխանների հանդեպ[4], սակայն չի կարելի անտեսել նաև պատմական այն իրողությունը, որ հենց Աբբասյանների օրոք էր, որ Արծրունիները գերակայություն և սեփականական իրավունքներ ձեռք բերեցին հարավ-արևելյան Հայաստանի նախարարական մյուս տոհմերի նկատմամբ։ Աբբասյանները ճանաչեցին Արծրունիների ինքնավար իրավունքները։ Խալիֆայության դեմ 774—775 թթ. հալերի մղած ազատագրական ապստամբությունից (որի գործուն մասնակիցներն էին Արծրունիները) հետո Հայաստանում ստեղծված ծանր իրավիճակում Արծրունիները և Հայոց մյուս նախարարները պահպանեցին և է՛լ ավելի ընդլայնեցին իրենց ինքնավար իրավունքները[5]։

Շարունակվում էին միջնադարին հատուկ գժտությունները Հայաստանի ֆեոդալական տների միջև։ Վասպուրականում դրանք հատկապես ցայտունորեն դրսևորվեցին VIII դարի սկզբին, Արծրունի և Մամիկոնյան տոհմերի միջև։ Ի հեճուկս Արծրունյաց իշխող տոհմաճյուղի, նույն տոհմի երկրորդական ճյուղերից մեկի պարագլուխ Ապուսելճը ամուսնացավ Մամիկոնյան օրիորդի հետ[6]։ Այդպիսով Մամիկոնյաններին հաջողվեց Արծրունիների մի ճյուղը դարձնել իրենց հնարավոր դաշնակիցը՝ ընդդեմ ախոյանների, որոնց թվում էին

---

[1] Genesius Regum. Bonnae, 1834, p. 67.

[2] J. Laurent. L'Arménie entre Byzance et l'Islam, depuis la conquête arabe jusqu'en 887. Paris, 1919, p. 212; R. Grousset. Histoire de l'Arménie des origines a 1071. Paris, 1947, p. 354; A. Toynbee. Constantine Porphyrogenitus and his World. London, 1973, p. 405; А. Н. Тер-Гевондян. Армения и арабский халифат. Ереван, 1977, с. 138.

[3] E. Honigmann. Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071. Bruxelles, 1935, S. 58; R. Grousset. Histoire de l'Arménie, p. 354.

[4] H. Daghbaschean. Grundung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni. Berlin, 1893, p. 56.

[5] Balâdhuri. The Origins of the Islamic State (Kitab Futuh al-Buldan). Vol. I, New York, 1916, p. 330.

[6] *Թովմա Արծրունի. Պատմութիւն տանն Արծրունեաց. Թիֆլիս, 1917, III, ԺԳ, էջ 313։*

նաև Արծրունիների գլխավոր նյուղի իշխանները։ Մամիկոնյանները հակված էին դեպի Բյուզանդիան, մինչդեռ Արծրունիները, ընդհակառակը, կողմնորոշվում էին դեպի Արաբական խալիֆայությունը։ Նույն դիրքորոշումն ունեին նաև Բագրատունիները։ Այս իրողությունը, բնականաբար, մերձեցնում էր Արծրունիներին և Բագրատունիներին։ Արծրունիները պաշտպանում են Աշոտ Մսակեր Բագրատունուն, ընդդեմ Հայաստան թափանցած Ջահհաֆյանների[7], նպաստում, որպեսզի Բագրատունիները տիրանան Մամիկոնյանների և Կամսարականների հողատիրություններին։ Բագրատունիների զորացումը բնավ չէր թուլացնում Արծրունիների ազդեցությունը հարավային Հայաստանում։ Նույնիսկ այն բանից հետո, երբ Աշոտ Մսակերը իր որդիներին հաստատեց Տարոնի ու Մոկքի իշխաններ, Արծրունիների ազդեցությունը հարավային Հայաստանում բնավ չթուլացավ։ Դեռ ավելին, ինչպես հաղորդում է Ասողիկը, երբ Աշոտ Մսակերը Կամսարականներից գնեց Արշարունիքը, իր նստավայրը Կոգովիտ գավառից տեղափոխեց այնտեղ[8]։ Բագրատունիների հեռանալը Կոգովիտից, ինչպես նկատում է Յ. Մարկվարտը, առնչվում է Վասպուրականում Արծրունիների աճող զորության հետ[9]։ Իհարկե, Աշոտ Մսակերի այդ քայլը հետևանք էր նաև Հայաստանի քաղաքական և հոգևոր-մշակութային կենտրոն Այրարատ նահանգում նստավայր ունենալու նպատակադրման։ Նման քայլն անշուշտ ժամանակակիցների վրա որոշակի ազդեցություն պետք է թողներ։ Հայոց թագավորների երբեմնի ոստանին տիրելու հանգամանքն ինքնին մեծ շուք էր հաղորդելու Բագրատունիների իշխանությանը՝ էլ ավելի ընդլայնելով նրանց քաղաքական և պետական ոլորտը։

Բագրատունիների և Արծրունիների դաշինքն ամրապնդվեց նաև քաղաքական ամուսնությամբ։ Աշոտ Մսակերն իր մի դստերը՝ Հռիփսիմեին կնություն տվեց Արծրունյաց գահերոց իշխանին, որի անունը չի պահպանվել հայկական սկզբնաղբյուրներում։ Նույն այդ իշխանի անունը հնարավոր է դառնում պարզել արաբ մատենագիրների երկերում եղած տվյալների օգնությամբ։ Բալադուրին, խոսելով Բուղայի աշղափանքի մասին, Արծրունյաց Մեծ իշխան Աշոտին անվանում է «Իբն Համդա» («Համդայի որդի»)[10]։ Հետևաբար Աշոտ Արծրունու հոր անունը արաբերենում հնչել է Համդա, որը նույնական է հայերեն Համազասպին։ Այսպես, XI դարի արաբ մատենագիր Միսկավայհը, պատմելով Վասպուրականի թագավոր Դերենիկ Արծրունու մասին, նրա եղբորը հիշում է Համդա անունով[11]։ Վերջինս հայկական սկզբնաղբյուրներում անվանվում է Համազասպ (կամ Աբուսահլ-Համազասպ)[12]։

Համազասպ (Համդա) Արծրունին, փեսայանալով Բագրատունիներին, ավելի ամրապնդեց իր իշխանությունը։ Նա եռանդուն պայքար տարավ Մամիկոնյանների և նրանց օժանդակող Ապուսալճ Արծրունու դեմ, որի կողմնորոշումը դեպի Մամիկոնյանները առաջին հերթին թելադրվում էր Վասպուրականում առաջնություն ունենալու միտումով։ Ապուսալճի այս ձգտումը ուներ իր արմատները։ Վաղ միջնադարում հարավ-արևելյան Հայաստանի նախարարությունների դգալի մասը ձուլվեց Արծրունիներին, կազմելով նույն տոհմի նյուղավորումները։ Սակայն միաձուլումը հաճախ կարող էր դրսևորվել քաղաքական համադաշինքի ձևով, որի դեպքում, բնականաբար, ավելի էր իրեն

[7] Հմմտ. R. Grousset. Op. cit., p. 342.

[8] Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ). Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, III, Բ, էջ 106։

[9] J. Marquart. Osteuropaische und Ostasiatische Streifzuge. Leipzig, 1903, S. 452.

[10] Baladhuri, I, p. 331.

[11] Miskawayh, II (H. F. Amedroz and D. S. Margoliouth; The Eclipse of the Abbasid Caliphate, vol. IV, London, 1921), p. 159.

[12] Տե՛ս Անանիա Մոկացի. Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից.—«Արարատ», 1897, էջ 140։ Գ. Հովսեփյան. Հիշատակարանք ձեռագրաց. Ա, Անթիլիաս, 1951, էջ 117—118, 135—136։

զգալ տալիս զորեղ տոհմաճյուղերի ինքնուրույնությունը։ Ո՞վ էր Ապուպելէզը։ Ց. Մարկվարտը ենթադրում է, որ նա պետք է լիներ 776 թ. հավատուրաց եղած Մեհրուժան Արծրունու թոռը[13]։ Դժվար է համաձայնվել այս կարծիքին, քանի որ Արծրունիների տոհմից հենց այս Մեհրուժանն էր հետևողական պայքար տանում Մամիկոնյանների դեմ[14], ուստի հազիվ թե նրա շառավիղները մերձենային Մամիկոնյաններին։ Ն. Ադոնցը կարծում է, որ Ապուպելէ Արծրունին պետք է սերած լիներ Մարդպետների (մարդերի) տոհմից, և որպես փաստարկ բերում է Վասպուրականի Մարդաստան գավառը նրա «բուն բաժին» լինելու պարագան[15]։ Սակայն Թովմա Արծրունու տվյալներից երևում է, որ Ապուպելէների ժառանգական հայրենիքը ոչ թե Մարդաստանն էր, այլ մեկ ուրիշ գավառ, որը թեև պատմիչը չի հիշատակում, սակայն անուղղակի կրովանները թույլ են տալիս մոտավորապես որոշելու այն։ Ըստ Թովմա Արծրունու, Ապուպելէի որդի Գուրգենը տիրում էր իր «բուն բաժինը» համարվող Մարդաստանը և Ասձևացյաց գավառի մի մասը։ Իսկ երբ Աշոտ Արծրունին նրանից պահանջեց հրաժարվել այդ շրջաններից, Գուրգենը հիշեցրեց, որ «ի հայրենեացն արտաքս հանեալ եք ի ժառանգութենէ... զայս ևս բռնազբօսեալ ջանայք»[16]։ Այս վկայությունից երևում է, որ Գուրգեն Ապուպելէի ժառանգական հայրենիքը կազմող հողատիրույթն արդեն իսկ խլված էր նրանից։ Հետևաբար, Ապուպելէների հայրենական տիրույթը ոչ թե Մարդաստանն էր, այլ մեկ ուրիշ գավառ, որը, դատելով անուղղակի տվյալներից, պետք է լիներ Ռշտունիքը։ Այս տեսանկյունից խնդրին մոտենալու դեպքում հասկանալի է դառնում, թե ինչու 851 թ. Բուղա զորապետի արշավանքին հաջորդած ծանր տարիներին Վասպուրականը կառավարող Գուրգեն Ապուպելէը իշխանանիստ դարձրեց Ռշտունիքի Ոստան բերդաքաղաքը[17]։

Որոշ փաստեր թույլ են տալիս կարծելու, որ Ռշտունիքի նկատմամբ Գուրգենը հավակնություն ուներ նաև 860-ական թթ.։ Այսպես, Աշոտ իշխանաց իշխան Բագրատունին 862 թ. զորքով ժամանելով Վասպուրականի Վանտոսպ գավառ, ձերբակալեց Դերենիկ Արծրունուն, որպես անհնազանդ վասալի և մտավ Ռշտունիք՝ գրավելով Ոստանը։ Այն ժամանակ Գուրգեն Ապուպելէը նրան ուղարկեց սպառնական գրություն և պատրաստվեց գիշերը հարձակվել Աշոտ իշխանաց իշխանի վրա, որն ստիպված եղավ ընդունել Գուրգենի առաջադրած պայմանները[18]։ Ժ. Լորանը կարծում է, թե այս ժամանակ Գուրգենն իշխում էր Ռշտունիքում[19]։ Սակայն եթե Գուրգենն իրոք իշխեր Ռշտունիքում, ապա հազիվ թե Աշոտ Բագրատունին ի զորու լիներ գրավել նույն գավառի անմատչելի կենտրոն Ոստան բերդաքաղաքը (որն, ինչպես տեսանք, նա գրավեց)։ Թովմա Արծրունու այլ վկայություններից երևում է, որ հետագայում ևս Ռշտունիքը չի եղել Գուրգենի իրավասության տակ, թեև նա ամեն կերպ աշխատել է տիրանալ նրա կենտրոն Ոստանին, որպես իր հոր եղերական սպանության վայրի[20]։

Այս փաստից թերևս կարելի է հետևեցնել, որ Գուրգենի հայր Ապուպելէը իշխանանիստ է դարձրել Ոստանը և տիրել է Ռշտունիքին, սակայն ի վերջո զոհ է գնացել Արծրունի իշխող տոհմաճյուղի հետ ունեցած արյունոտ պայքարում։ Բացի այդ, Մարդպետների տոհմը IV դարից հետո վերացավ քաղաքական ասպարեզից (նրանց մնացորդները ձուլվեցին Արծրունիներին), մինչդեռ Ռշտունյաց տոհմը գոյատևեց մինչև VIII դարի սկիզբը (իմա՝ Նախճավա-

13 J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen. Wien, 1930, S. 85.

14 Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի. Վենետիկ, 1862, ԽԱ, էջ 76։

15 Ն. Ադոնց. Պատմական ուսումնասիրություններ. Փարիզ, 1948, էջ 74—75։

16 Թովմա Արծրունի. III, ԺԷ, էջ 344։

17 Նույն տեղում, III, ԺԳ, էջ 323։

18 Նույն տեղում, ԺԴ, էջ 336։

19 J. Laurent. Un feodal Armenien au IXe siècle: Gourguen Ardzrouni fils D'Abou Beldj.—Etudes d'Histoire Arménienne. Louvain, 1971, p. 46.

20 Թովմա Արծրունի. III, ԻԲ, էջ 377։

սի և Խրամի աղետը)[21]։ Հետևաբար, Մարդպետների տոհմի անկումից հետո Ռշտունիները մոտ երեք դար պահպանել են իրենց գոյությունը և, ինչպես հայտնի է, առաջատար դեր են կատարել ոչ միայն Վասպուրականում, այլև երբեմն նաև՝ բովանդակ Հայաստանում, նույնիսկ նրա սահմաններից դուրս։ (Ուշադրավ է, որ պատմական ավանդությունը Վասպուրականում ամենանշանավոր վանքերի հիմնումը կապում է Ռշտունյաց տոհմի իշխանների հետ)[22]։ Բնականաբար, V դարից հետո հենց Ռշտունիների (և ոչ թե Մարդպետների) սերունդները կարող էին մրցակցել Արծրունիների հետ։ Այդ մրցակցությունը շարունակվել է նաև VIII դարից հետո, որովհետև բացառված չէր, որ Արծրունիների հետ միավորված Ռշտունի ազատները դիմեին ընդդիմադիր քայլերի, իրենց տոհմի երբեմնի իրավունքները վերստանալու հույսով։ Կարելի է ենթադրել, որ Ապուպելճի տոհմաճյուղը սերում էր Ռշտունիներից։

Ինչևէ, Ապուպելճի և Համազասպ (Համզե) Արծրունու միջև մղվող պայքարն ավարտվեց վերջինիս հաղթանակով[23]։ Անշուշտ, դրան նպաստեց նաև Ծամիկոնյանների թուլացումը։ Համազասպ Առծոունու հաղթանակով, բնականաբար, Արծրունիների իշխող տոհմաճյուղի դիրքերն ավելի ամրապնդվեցին։ Համազասպին վերապահվեց Արծրունիների տոհմապետի և Վասպուրականի Մեծ իշխանի պատիվը։

Բագրատունիների հետ Արծրունիների մերձեցումը հետևանք էր նաև խալիֆայության հանդեպ այդ երկու տների միատեսակ դիրքավորման։ Ընդունելով Բագրատունիների գերակայությունը, իհարկե, ելնելով իրենց տոհմի և իշխանության շահերից, Արծրունիները խալիֆայության նկատմամբ հանձն են առել վասալական պարտավորություններ։ Ուստի նրանք զինական աջակցություն են ցույց տալիս ոչ միայն Բագրատունիներին՝ ընդդեմ նրանց հակառակորդների, այլև Աբբասյաններին (անշուշտ, Բագրատունիների հետ)՝ Բյուզանդիայի, խազարների և այլոց դեմ մղած կռիվներում։ Գենեսիոսի՝ վերը նշված վկայությունը դրա հաստատումն է։ Բնականաբար, Աբբասյաններն իրենց հերթին օժանդակում էին հարավ-արևելյան Հայաստանում Արծրունիների դիրքերի ամրապնդմանը։ Հայաստանի այդ երկու զորեղագույն տոհմերի քաղաքական կողմնորոշման նույնությունը նպաստեց Արծրունյաց իշխանության ամրապնդմանը և Բագրատունիների շուրջը հայ ֆեոդալների համախմբմանը։ Բագրատունիների և Արծրունիների հակաբյուզանդական կողմնորոշումը (ինչը հավաստվում է Գենեսիոսի նույն հաղորդմամբ) պայմանավորված էր հայ նախարարների հանդեպ Աբբասյանների սիրաշահող քաղաքականությամբ, իսկ վերջինս հետևանք էր ոչ միայն հայերի ռազմուժը կայսրության դեմ հանելու, այլև, ըստ երևույթին, տվյալ պահին Բաբեկի գլխավորությամբ ծավալված շարժման դեմ Հայաստանում հակակշիռ ստեղծելու նպատակադրման։ Քաջ հայտնի է, որ Բաբեկի գլխավորած շարժումը հիմքից սասանեց խալիֆայության համակարգը, արձագանք գտնելով նաև հարավ-արևելյան Հայաստանում[24]։ Իհարկե, հայ ֆեոդալները, որպես տիրող դասակարգի ներկայացուցիչներ, վերջին հաշվով պահելու էին ոչ թե ապստամբների, այլ նրանց հակառակորդների կողմը։ Մենք փաստեր չունենք, թե Արծրունի իշխանները կամ Բագրատունիները նպաստել են Բաբեկի ապստամբության ճնշմանը։ Սակայն նրանց արարքների կողմնորոշումը ինքնին նպաստում էր, որպեսզի շարժումը ոչ միայն չտարածվի իրենց տիրույթներում, այլև բացառվի խալիֆայությանը հակառակորդ Բյուզանդիայի կողմից ապստամբներին անմիջական ռազմական օժանդակություն ցույց տալը։

838 թ. Գենեսիոսի հիշատակած վասպուրականցի իշխանը, դատելով Թովմա Արծրունու տվյալներից, պետք է լիներ Համազասպ Արծրունու որդի

---

21 Հմմտ. J. Markwart. Sudarmenien..., S. 79.

22 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 8309 էջ 26բ, ձեռ. N 1522, էջ 530ա։

23 Թովմա Արծրունի. III, ԺԴ, էջ 330, 333, ԻԲ, էջ 377։

24 Chronique de Michel le Syrien. t. III, Paris, 1905, p. 50—51.

Աշոտը։ Այսպես, պատմագիրը գրում է, որ Աշոտ Արծրունին, «կեցեալ ամս ԺԹ, տնեալ իշխանական նախութեանն ԺԶ ամ յառաջ քան զգերութիւնն Հայոց»[25]։ Հայերի գերությունը, հայտնի է, որ կատարվել է 851 թ.։ Հետևաբար, եթե Աշոտ Արծրունին 19 տարեկան հասակում դարձել է Արծրունյաց Մեծ իշխան և այդ պաշտոնը վարել է 16 տարի (ինչը հավաստված է Թովմա Արծրունու՝ վերը բերված վկայությամբ), այսինքն մինչև Բուղա զորապետի կողմից իր աքսորվելը 851 թ., ուրեմն նա Վասպուրականում իշխել է աքսորվելուց 16 տարի առաջ, այսինքն սկսած 835 թ.։ Հետևաբար Գենեսիոսի հիշատակած վասպուրականցի իշխանը եղել է նույն ինքը՝ Աշոտ Արծրունին։ Ստացվում է այնպես, որ խալիֆայությանը զորքով օժանդակություն ցույց տված իշխանը նույն խալիֆայության կամքով 851 թ. արժանացել է աքսորի ու բանտի։

Դա հետևանք էր անշուշտ այն իրողության, որ 840-ական թթ. կեսերից Աբբասյան խալիֆայությունը որդեգրեց նոր քաղաքականություն, որն իր սուր ծայրով ուղղված էր տեղական ինքնավար իշխանությունների (այդ թվում նաև հայ իշխանների) դեմ։ Մութավաքիլ խալիֆան (847—861) սուր հալածանքներ սկսեց քրիստոնյաների դեմ, պետությունը ավելի կենտրոնացնելու նպատակով[26]։ Հայաստանում այս քաղաքականությունը իրեն առաջին հերթին հատկապես զգալ տվեց հարավային գավառներում։ 849 թ. հարավից Հայաստանի սահմաններին մոտեցած Աբու Սայիդ (Թովմա Արծրունու մոտ՝ Աբուսեթ) զորապետը և իր հաջորդները նպատակադրվել էին Հայաստանում գործադրել Մութավաքիլի կրոնաքաղաքական ծրագիրը՝ պայքարը հանուն այսպես կոչված ուղղափառ մահմեդականության, որը բացառում էր այլակրոն իշխանների իրավունքները։ Հայաստանի հանդեպ Աբբասյանների վարած քաղաքականությունը ավելի սուր դրսևորումներ ունեցավ հատկապես 851 թ. հետո, երբ մեկամյա դադարից հետո Փոքր Ասիայի արևելքում վերսկսվեցին ընդհարումները Բյուզանդիայի և խալիֆայության միջև[27]։ Ստեղծված իրավիճակում, ինչպես հաղորդում է Թովմա Արծրունին, Արծրունյաց իշխանությունը դիտվում էր որպես Աբբասյանների նոր քաղաքականությանը դիմակայող զորեղ ուժ[28]։ Ստվարաթիվ զորքով դեպի Հայաստանի սահմանները շարժվող զորապետները իրենց առաջին հարվածներն ուղղեցին նաև Արծրունյաց տիրույթների դեմ։ Անշուշտ, նրանց նպատակակետը ամբողջ Արմինիան էր։ Ուշագրավ է այն իրողությունը, որ թեև Հայաստան ուղարկված Յուսուփ զորապետին պարտության մատնեցին Խութ գավառի լեռնցիները, սակայն արաբ պատմիչները, անշուշտ, տուրք տալով խալիֆայության առաջադրած պաշտոնական տեսակետին (որը ապստամբության համար մեղքը բարդում էր ոչ միայն Խութ գավառի, այլև ամբողջ Հայաստանի վրա), գրում են, թե իբր խութեցիների ապստամբությանն օժանդակել են Հայաստանի մյուս գավառները։ Այսպես, Բալազուրին գրում է, թե իբր ապստամբ խութեցիներին Հայաստանի իշխաններից ամեն մեկն ուղարկել է օգնական զորք[29]։ Մինչդեռ ապստամբությանը ժամանակակից Թովմա Արծրունին հաղորդում է, որ ապստամբել են միայն «բնակիչք լերինն», «մեկնակազէնքն Խութայ»[30]։ Նույնն են հավաստում նաև Հովհաննես Դրասխանակերտցին և Սամվել Անեցին[31]։ Ապստամբության մեջ

25 Թովմա Արծրունի. III, ԺԸ, էջ 349։

26 Е. А. Беляев. Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье. М., 1966, с. 217.

27 А. Васильев. Политические отношения Византии и арабов за время Аморийской династии. СПб., 1900, с. 161.

28 Թովմա Արծրունի. II, Զ, էջ 195—196, III, Ա, էջ 207, 209։

29 Baladhuri. I, p. 331.

30 Թովմա Արծրունի. II, Է, էջ 201։

31 Հովհաննես Դրասխանակերտցի. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 119—120։ Սամուէլ Անեցի. Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 92։

բովանդակ Հայաստանը մասնակից տեսնելու միտումը բխում էր բոլոր քիչ թե շատ նշանավոր հայ իշխաններին աքսոր ուղարկելու նպատակադրումից։ Եվ իրոք, ապստամբությունից մեկ տարի հետո ձերբակալվեցին և Սամառա ուղարկվեցին Աշոտ Արծրունին, Հայաստանի իշխան Բագարատ Բագրատունին, անգամ Սմբատ Ապլաբաս Բագրատունին, որը ոչ միայն չէր սատարել ապստամբներին, այլև համագործակցել էր Բուղա զորապետին։ Ուշագրավ է, որ վերջինս, հայկական իշխանությունները քաղաքականապես գլխատելու նպատակով, աքսորեց նշանավոր տոհմերի իշխող ճյուղերի անդամներին։ Նա առաջ քաշեց և ճանաչեց այդ տոհմերի երկրորդական ճյուղերի իշխաններին։ Նպատակն էր երկպառակություն սերմանելով, ջլատել հայ նախարարների ուժերը։ Օրինակ, Բուղան Հայաստանի իշխանների մեջ բոլորից առավել նախապատվություն տվեց Մոկաց տեր Սմբատ Բագրատունուն (այլ է Սմբատ Ապլաբաս Բագրատունուց), ճանաչեց Արծրունիների երկրորդական ճյուղերից մեկի իշխան Դուրգենի (Ապուպելճի որդու) իշխանությունը[32] և այլն։

Հայաստանից Բուղայի հեռանալուց հետո, փոփոխված իրադրության՝ Բյուզանդիայի վերահաս առաջխաղացման պայմաններում, Աբբասյաններն սկսում են սիրաշահել Հայաստանի նախարարական տոհմերի իշխող ճյուղերի անդամներին, որպեսզի նրանց ուժերն օգտագործեն Բյուզանդիայի դեմ[33]։

Ուշագրավ է, որ խալիֆայությունը Արծրունյաց երբեմնի Մեծ իշխան Աշոտ Արծրունու նկատմամբ ցուցաբերեց վերապահ մոտեցում՝ նրան աքսորից ազատ արձակեց ուշացումով։ Ըստ Թովմա Արծրունու, Վասպուրականի իշխանները Սամառայից հայրենիք վերադարձան իրենց գերության յոթերորդ տարում, այսինքն 858 թ.։ Նույն տարում գերեդարձվեց նաև Աշոտ Արծրունու որդի Դերենիկը, որը, ըստ Թովմա Արծրունու, 10 տարեկան էր։ Սակայն նույն պատմիչի ուրիշ վկայություններից երևում է, որ Դերենիկը աքսորից վերադառնալիս եղել է ոչ թե 10, այլ 12—13 տարեկան, որով ավելի էր իմաստ ստանում նրան Վասպուրականի կառավարիչ նշանակելը։ Հատկանշական է, որ խալիֆայությունից Վասպուրականը տիրոջի իրավունք ստացան թե Դերենիկը և թե հայրը՝ Աշոտ Արծրունին[34]։ Սակայն վերջինս ազատ չարձակվեց։ Թովմա Արծրունու Պատմության մեջ Աշոտ Արծրունու գերեդարձման տարի է նշված 858-ը[35], որն իհարկե սխալ է։ Որովհետև պատմագիրը նույն Աշոտի մահը դրնում է հայոց 318 թվականին, հոռի ամսի 6-ին, հինգշաբթի օրը (այսինքն 874 թ. մայիսի 27-ին) և միաժամանակ նշում, որ գերեդարձ լինելուց հետո Աշոտն ապրել է 6 տարի[36], ուստի նա պետք է վերադարձած լինի ոչ թե 858, այլ 868 թ., այսինքն իր մահից (874) 6 տարի առաջ։ Հետևաբար Աշոտ Արծրունին գերության մեջ մնացել է 16 տարի և հայրենիք է վերադարձել որդուց 10 տարի հետո, Մութադ խալիֆայի (866—869) օրոք։

Որո՞նք էին Աշոտ Արծրունու՝ աքսորից այսքան ուշ վերադառնալու պատճառները։ Թովմա Արծրունու հավաստմամբ խալիֆայությունը կամեցել է Աշոտ Արծրունուն հայ ազատների զորագնդով օգտագործել իր հակառակորդների դեմ, թերևս ի նկատի առնելով նրա ծառայությունները։ Սա անշուշտ նաև Արծրունյաց Մեծ իշխանի երբեմնի իրավունքների ճանաչումն էր, որի համար, ինչպես տեսանք Գենեսիոսի հաղորդումից, Վասպուրականի տերը դեռ 838 թ. իր զորագնդով կռվում էր խալիֆայության թշնամիների դեմ։ Ըստ Թովմա Արծրունու, Բուղայի որդի Մուսեն, որը գլխավորում էր խալիֆայության զորքը, Աշոտ Արծրունուն թույլ չէր տալիս վերադառնալ հայրենիք։ Դա թելադրվում էր տվյալ պահին խալիֆայությունում ստեղծված իրադրությամբ։ Մութավաքիլի հաջորդները դիմադուրկ և ողորմելի խալիֆաներ էին, որոնք գործում էին ար-

32 Թովմա Արծրունի. III, Բ, էջ 229—230, ԺԴ, էջ 321։

33 J. Laurent. Etudes d'Histoire Arménienne, p. 39.

34 Թովմա Արծրունի. III, ԺԴ, էջ 326, 328։

35 Նույն տեղում. III, ԺԵ, էջ 339։

36 Նույն տեղում, էջ 351։

քունի զորքի հրամանատարի թելադրանքով[37]։ Տվյալ պայմաններում Մուսեն լիովին կարող էր տնօրինել Աշոտ Արծրունու բախտը։ Թեև վերջինս հեռու էր հայրենիքից, սակայն մեծ ազդեցություն ուներ հարավ-արևելյան Հայաստանի իշխանների վրա։ Ընդ որում, Դերենիկ Արծրունու գերեդարձ լինելուց մեկ տարի հետո, այն է՝ 859 թ. աքսորից վերադարձավ նրա հորեղբայր Գուրգենը, որը հավակնում էր դառնալ Արծրունյաց Մեծ իշխան և գործում էր եղբոր՝ Աշոտի անունից։ Հատկանշական է, որ մինչև այդ Արծրունյաց տիրույթներում իշխող Գուրգեն Ապուպելճին նա ի ցույց դրեց խալիֆայի հրամանը՝ Աշոտ Արծրունուն Արծրունյաց գահերեց ճանաչելու մասին[38]։ Ինքը՝ Գուրգեն Ապուպելճը նույնպես չէր համարձակվում անտես առնել Աշոտ Արծրունու տերունական իրավունքները և ճանաչում էր նաև վերջինիս որդու՝ Դերենիկի իրավունքները, զորավիգում նրան։ Այսպես, երբ Հայաստանի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին զորքով ժամանեց Վասպուրական և Վանտոսպ գավառում ձերբակալեց Դերենիկին, որպես անհնազանդի, Գուրգեն Ապուպելճը Աշոտ Բագրատունուց սպառնագին պահանջեց ազատ արձակել Դեռենիկին։ Հայաստանի իշխանաց իշխանը ստիպված անսաց Գուրգենին։ Այս դեպքը, ըստ Արծրունի պատմիչի, կատարվել է «ի թուականութեան հայոց ՅԺԱ երրորդ ամին»[39], այսինքն 862 թ.։ Դերենիկի իրավունքների հարգելը Գուրգենի կողմից, ինչպես ցույց տվեցին այս և հետագայի անցքերը, բխում էր ոչ թե վերջինիս թուլությունից, այլ խալիֆայության կողմից Աշոտ Արծրունու և նրա որդու՝ Վասպուրականում ունեցած իրավունքների ճանաչումից։ Գուրգեն Ապուպելճի զորության ցայտուն վկայությունն էր քիչ հետո դեպի Տարոն և Աղձնիքի Արզն (Աղձն) գավառներ նրա կատարած արշավանքը[40], որը պայմանավորված էր Արևելքում բյուզանդական զորքի առաջխաղացմամբ։ 863 թ. կայսրության բանակները ջախջախեցին Հայաստանի սահմանամերձ շրջաններում տեղակայված արաբական զորքը[41]։ Յ. Մարկվարտը կարծում է, որ Տարոնում Գուրգենի գրտնվելը վկայում է, որ դեռևս աքսորից չէին վերադարձել այդ գավառի տերերը (Բագարատունու որդիները)[42]։ Ժ. Լորանի կարծիքով Գուրգենն իշխել է Տարոնում և դա հնարավոր է եղել, քանի որ, իբր, Տարոնի տերերը դեռևս չէին վերադարձել աքսորից[43]։ Ն. Ադոնցն ընդհակառակը կարծում է, որ Գուրգենն արշավեց Տարոն որպես հուսալի վայր՝ հովանավորվելու նրա իշխաններից (որոնց վերադարձը աքսորից նա դնում է 858 թ.)[44]։

Թովմա Արծրունու վկայությունից հնարավոր չէ որոշակիորեն եզրակացնել, թե Գուրգենն իրոք տիրել է Տարոնը։ Ըստ երևույթին Գուրգենն արշավել է Տարոն, որպեսզի ի դեմս Տարոնի Բագրատունիների, դաշնակիցներ ձեռք բերի իր հակառակորդների դեմ։ Իհարկե, Բագրատունիները նույնպես կարիք ունեին դաշնակիցների, ուստի պետք է ընդառաջեին Գուրգենին։ Անշուշտ, Գուրգենը ճանաչել է Տարոնի Բագրատունիների տերունական իրավունքները, որի դեպքում նա կարող էր ավելի անկախ լինել Արծրունյաց իշխող տոհմաճյուղից։ Ինչևէ, Տարոնի տերերի և Գուրգեն Ապուպելճի դաշինքը ուղղված էր նաև Արծրունիների իշխող ճյուղի և նրանց համագործակցողների դեմ։ Այս առումով ուշագրավ է, որ Տարոնից Գուրգենն արշավեց Աղձնիքի Արզն գավառ, այնտեղից՝ Անձևացիք։

Անձևացյաց գավառը ինքնուրույն իշխանություն էր, որի տերերը, սակայն, ճանաչում էին Արծրունիների տերունական իրավունքները։ Ուստի այդ գավա-

---

37 Е. Беляев. Указ. соч., с. 217.

38 Թովմա Արծրունի. III, ԺԴ, էջ 329։

39 Նույն տեղում, էջ 336։

40 Նույն տեղում, III, ԺԵ, էջ 338։

41 История Византии. Т. II, М., 1967, с. 188—189.

42 J. Markwart. Südarmenien..., S. 305.

43 J. Laurent. Etudes..., p. 45.

44 N. Adontz. Les Taronites en Arménie et a Byzance. —.Etudes arméno-byzantines", Lisbonne, 1965, p. 204.

ոի նկատմամբ Գուրգենի հավակնություններն ուղղված էին նաև Աշոտ Արծրունու և Դեռենիկի դեմ։ Ճիշտ է, նույն անցքերից քիչ առաջ վախճանված Անձևացյաց իշխան Մուշեղը իր տիրույթների մի մասը կտակել էր Դերենիկ Արծրունուն, մյուսը՝ իր մանկահասակ որդուն, սակայն նրա այրի Հեղինեն գերադասեց հրավիրել Գուրգենին՝ տիրելու Անձևացյաց գավառում[45], հանձին նրա կամենալով գտնել դորեղ հովանավորի[46]։ Դա էլ հենց դարձավ բարեպատեհ առիթ Գուրգենի համար։

Անձևացյաց գավառը անջրպետում էր Վասպուրականը հարավից և կանխում Արծրունիների ծավալման հնարավորությունը դեպի հարավ՝ Կորճայք ու Մոկք։ Դերենիկ Արծրունին նույնպես կամեցավ օգտագործել հարմար պահը և վերջ տալ Անձևացյաց գավառի ինքնուրույնությանը։ Այդ ուղղությամբ նրա ձեռնարկած քայլերը դատապարտվեցին անհաջողության՝ գավառում Գուրգեն Ապուսելճի դորության առկայության պատճառով[47]։ Անձևացիքին առնչվող վերը հիշված անցքերը Թովմա Արծրունին դնում է հայ նախարարների գերեվարման 6-րդ տարում՝ հայոց ՅԶ (857) թ.[48]։ Սա հակասում է պատմագրի այն հաղորդմանը, ուր, ինչպես տեսանք, նշվում է, որ Դերենիկը գերությունից վերադարձել է նախարարների գերեվարման 7-րդ տարում, այսինքն 858 թ.։ Հետևաբար, 857 թ. Դերենիկը դեռևս աքսորում է եղել։ Բացի այդ, պատմագիրը նշում է, որ Անձևացյաց գավառի հետ կապված դեպքերից առաջ Գուրգեն Ապուսելճը ձերբակալվել է Կարինում և ազատվել միայն Մութավաքիլ խալիֆայի մահից հետո[49]։ Հայտնի է, որ վերջինս վախճանվել է 861 թ.։ Հետևաբար Անձևացյաց գավառի շուրջը Գուրգենի և Դերենիկի միջև ծավալված պայքարը տեղի է ունեցել այդ թվականից հետո։ Ուստի Թովմա Արծրունու Պատմության ընագրի «այս Զ ամ էր գերութեանն Հայոց և ՅԶ նորուն թուականութեան» դարձվածքում Զ-ն պետք է ուղղել Ժ (10), իսկ ՅԶ-ն՝ ՅԺ (861), որով ստացվում է ստույգ թվականը։ Ռ. Գրուսեն Անձևացյաց գավառին Գուրգեն Ապուսելճի լիիշխան տեր դառնալը դնում է 867 թ.[50], որը սակայն չի ապացուցվում։

Այսպիսով, Գուրգեն Ապուսելճը Աշոտ Արծրունու և նրա որդու՝ Դերենիկի նկատմամբ ունեցած վասալական պարտավորությունները խախտել է սոսկ այն բանից հետո, երբ դաշնակցել է Տարոնի Բագրատունիների հետ։ Նա ուժի պորությամբ կարողացավ տիրել Անձևացյաց գավառին։ Դերենիկը ստիպված համակերպվեց ստեղծված դրությանը։ Սակայն, ինչպես կտեսնենք ստորև, հետագայում նրա հայրը՝ Աշոտ Արծրունին չճանաչեց Գուրգենի իրավասությունը Անձևացյաց գավառի և նույնիսկ նրա «բուն բաժին» Մարդաստան գավառի նկատմամբ, թեև պետք է նշել, որ Գուրգենի իշխանությունն ամենից առաջ սպառնալիք էր հարևան մահմեդական ամիրայությունների դեմ։ Ժ. Լորանը ենթադրում է, թե Գուրգենը ինչ-որ չափով հենվում էր Բյուզանդիայի աջակցության վրա[51]։ Սակայն աղբյուրները փաստեր չեն ընձեռում նման հետևության համար։

Վասպուրականում Գուրգեն Ապուսելճի գործողությունները խախտում էին նահանգում Արծրունյաց իշխող ճյուղի հեղինակությունը։ Աշոտ Արծրունին, ինչպես տեսանք, աքսորից ուշ վերադարձավ։ Որ Աշոտ Արծրունին 858 թ. հետո բավական ժամանակ մնացել է աքսորում, հավաստվում է Թովմա Արծրունու այլ վկայություններով։ Այսպես, պատմագիրը, խոսելով Վասպուրականում 861 թ. և հետագայի անցքերի մասին, բոլորովին չի հիշում Աշոտ Արծրունուն, որը հայրենիքում լինելու դեպքում, բնականաբար, պետք է գտնվեր անցքերի հորձանուտում։ Բացի այդ, պատմագիրը նշում է, որ Աշոտ Արծրունին Մու-

45 Թովմա Արծրունի. III, ժե, էջ 338։

46 Հմմտ. J. Laurent. Etudes..., p. 46.

47 Թովմա Արծրունի. III, ժե, էջ 339։

48 Նույն տեղում։

49 Նույն տեղում. III, ԺԴ, էջ 330—333։

50 R. Grousset. Op. cit., p. 379

51 J. Laurent. Etudes..., p. 46.

սեի բանակում մասնակցել է Ղազվին քաղաքի գրավմանը[52], որը, ըստ արաբ պատմագիր Թաբարու, տեղի է ունեցել 867 թ. դեկտեմբերի 1-ին[53]։

Գերեդարձվելուց հետո Աշոտ Արծրունին Արծրունյաց տիրույթներում պահպանեց Մեծ իշխանի իրավազորությունը, որը ճանաչված էր Աբբասյանների, ինչպես նաև Աշոտ իշխանաց իշխան Բագրատունու և Հարևան ամիրությունների կողմից։ Մինչդեռ Գուրգեն Ապուպելճը շարունակում էր իշխել Ծնձևացյաց գավառում և Մարդաստանում։ Աշոտ Արծրունին նրանից պահանջեց հրաժարվել Անձևացիքից, նույնիսկ զորք հանեց Գուրգենի դեմ, սակայն պարտվելով, ստիպված եղավ անցնել Ռշտունյաց Ոստան բերդաքաղաք[54]։ Այս փաստից երևում է, որ վերջինս Գուրգենի իրավասության տակ չէր։ Ըստ երևույթին Աշոտ Արծրունին դեռևս երկյուղ էր կրում, որ Գուրգենը նորից փորձելու է ամրանալ Ռշտունիքում։

Աշոտ Արծրունին, զորանալով Հայաստանի իշխանաց իշխանի որդու՝ Սահակ Բագրատունու, Մոկաց իշխան Մուշեղ Բագրատունու և Արզնի ամիրայի օգնությամբ, զորքով հարձակվեց Գուրգեն Ապուպելճի վրա և պաշարեց նրա իշխանանիստ Կանգավարը[55]։ Բագրատունիների (չհաշված Տարոնի տերերին, որոնք հավանաբար շարունակում էին ճանաչել Գուրգենի իրավունքները) և Արզնի ամիրայի դաշինքը Աշոտ Արծրունու հետ, ըստ երևույթին արդյունք էր նաև այն իրողության, որ Արծրունիները խնամիական կապերի մեջ էին Բագրատունիների և Արզնի տերերի հետ։ Փաստորեն դեպի Տարոն և Արզն Գուրգենի կատարած արշավանքն իր օգտին չէր. այն իր դեմ միավորեց Հայաստանի զորեղ ուժերին և այդպիսի իրավիճակում հազիվ թե Տարոնի տերերի և Գուրգենի դաշինքը շարունակվեր։ Ինչևէ, ինչպես նկատում է Ռ. Գրուսեն, Գուրգենը, որպես Արծրունյաց տոհմի կրտսեր ներկայացուցիչ, իր ձեռնարկումներով անուղղակիորեն դառնում էր խռովարար[56]։ Ուստի Գուրգենը պատշաճ համարեց հաշտվել Աշոտ Արծրունու հետ։ Եվ Արծրունիների իշխող ճյուղի դեմ Գուրգենի պայքարը հարթվեց նրանց միջև կնքված «խաղաղության ուխտ»-ով։ Ուշագրավ է, որ Արծրունիների իշխող տոհմաճյուղից կողմ է հիշվում ոչ թե Դերենիկը, այլ նրա հայրը՝ Աշոտ Արծրունին[57]։ Սա ևս վկայում է, որ Արծրունյաց Մեծ իշխանի պատիվը վերապահվում էր Աշոտին։

Գուրգենի հետ կնքած «խաղաղության ուխտ»-ից հետո միայն Աշոտ Արծրունին ձեռնարկեց հարևան ամիրայությունների կողմից խլված որոշ շրջանների ետգրավումը։ Դրանց թվում էր Ամյուկ ամրոցը, որը բացառիկ կարևոր նշանակություն ուներ Վասպուրականի պաշտպանության համար։ Ըստ Թովմա Արծրունու, այս անառիկ ամրոցը Վասպուրականից 100 տարի առաջ խլվել էր խալիֆայության կողմից։ Ամյուկի դեմ Աշոտ Արծրունու ձեռնարկած հարձակումը պետք է կատարված լինի 870 թ. հետո, քանի որ Հիսե ամիրան, որ այս կռիվների ընթացքում օժանդակում էր Ութմանիկներին ընդդեմ Արծրունիների[58], Հայաստանի ոստիկան է հիշվում 870 կամ 871 թ.։ Հետևաբար, ելնելով պատմիչի վերոհիշյալ վկայությունից, կարելի է կարծել, որ Ամյուկը Վասպուրականից խլվել է 770-ական թթ.։ Ըստ երևույթին 774—775 թթ. հայերի ժողովրդաազատագրական ապստամբության պարտությունից հետո Արմինիայի ոստիկանը, հաշվի առնելով Ամյուկի անառիկ դիրքը, կամեցել է այն պահել մահմեդական ամիրաների հսկողության տակ, որպեսզի անհրաժեշտության դեպքում իր ազդեցությանը ենթարկի Վասպուրականը։ Ըստ Կոստանդին Ծիրանածնի, հարավային Հայաստանը ևս Աշոտ Բագրատունի իշխանաց իշ-

---

52 Թովմա Արծրունի. III, ԺԶ, էջ 341—342։

53 J. Markwart. Sudarmenien, S. 368.

54 Թովմա Արծրունի. III, ԺԷ, էջ 343—345։

55 Նույն տեղում, էջ 345։

56 R. Grousset. Op. cit., 375.

57 Թովմա Արծրունի. III, ԺԷ, էջ 345։

58 Նույն տեղում. III, ԺԸ, էջ 346, 347։

խանի գերիշխանության տակ էր։ Սակայն խալիֆայությունից Բագրատունիների ունեցած կախվածության պայմաններում, Ամյուկը շարունակել է մրնալ մահմեդական ամիրաների գերիշխանության տակ։ Յ. Մարկվարտը կարծում է, թե Ամյուկը Վասպուրականից կարող էր խլված լինել Աշոտ I Բագրատունու օրոք[60], որը դժվար է ապացուցել։

Սակայն խնդիրը միայն Ամյուկով չվերջացավ։ Թովմա Արծրունին գրում է, որ հարևան ամիրայությունները գրավել էին նաև Վարագա վանքը[61]։ Սա վկայում է, որ Հայաստանում հաստատված օտար տարրը կամենում էր ամրանալ նաև Վասպուրականում։ Դերենիկը չհամարձակվեց ետ գրավել Ամյուկը և Վաչագը։ Աշոտ Արծրունին, ձեռնարկելով դրանց ազատագրման գործը, բախվեց Ութմանիկների հետ։ Վերջիններիս դեմ Աշոտ Արծրունու պայքարը սպառնում էր վերաճել Արմինիայի ոստիկանի դեմ պատերազմի։ Արծրունիների երկրորդական տոհմաճյուղերից մեկի նահապետ Վահան Արծրունու միջնորդությամբ հնարավոր եղավ հաշտության հասնել ոստիկանի հետ՝ Արծրունյաց իշխանության կողմից արքունի հարկը մուծելու հանձնառությամբ[62]։ Սա պետք է տեղի ունեցած լինի 870 կամ 871 թ., Հիսեի ոստիկան դառնալու տարում։ Վերը նշված հաշտությամբ որոշ ժամանակ ապահովվեց Վասպուրականի խաղաղությունը։ Գուրգեն Ապուսելեմը այլևս չպայքարեց Արծրունյաց իշխող տոհմաճյուղի դեմ (նույնիսկ զորավիգեց նրանց ընդդեմ Ութմանիկների)։ Նա զբաղվում է նաև մշակութային ձեռնարկումներով։ Ըստ մի ձեռագիր հիշատակարանի, IV դարի նահատակ Արգլմսեհի վկայությունը ասորերենից թարգմանվել է հայերենի՝ «Հրամանաւ տեառն Գուրգենա Արծրունոյ, ի թուականութեանս Հայոց ՅԻԹ (880), ի բարեխաւսութիւն անձին իւրոյ, Ատոմայ որդւոյ իւրոյ և աւանդեաց նոյնինքն Գուրգէն տօնախմբել զօր յիշատակի նորա»[63]։

Աշոտ Արծրունին, ինչպես տեսանք, գերեզարձությունից հետո քիչ ապրեց (վեց տարի)։ Միայն նրա մահից (868 թ.) հետո որդին՝ Դերենիկը, դարձավ Արծրունյաց Մեծ իշխան և, Հովհաննես Դրասխանակերտցու արտահայտությամբ, «պայազատէր զիշխանական պետութիւնն»[64]։ Հետևաբար Աշոտ Արծրունին մինչև իր մահը մնացել է Մեծ իշխան։

Այսպիսով, 830-ական թթ. ինչպես հիշում է Գևևսիոսը, Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունին իր զորագնդով դաշնակցում էր Աբբասյան խալիֆայությանը՝ ընդդեմ Բյուզանդիայի։ Սակայն հաղթիվ էր անցել մեկ տասնամյակ, երբ Աբբասյանները որդեգրում են նոր քաղաքականություն, որի հետևանքով Արծրունյաց Մեծ իշխանը դիտվում է որպես թշնամի, որն իբր սպառնում էր խալիֆայությանը բուն Արմինիայում։ Հետագայում, փոփոխված իրադրության պայմաններում, Աբբասյանները գերադասում են վերադառնալ նախկին քաղաքականությանը և վերականգնել Արծրունյաց Մեծ իշխանի իրավունքները, իհարկե, վերստին նրանից ռազմական օժանդակություն ստանալու պայմանով։

---

59 Կոստանդին Ծիրանածին, թարգմ. Հ. Բարթիկյանի (Բյուզանդական աղբյուրներ, Բ). Երևան, 1970, էջ 10։

60 J. Markwart. Südarmenien..., S. 299.

61 Թովմա Արծրունի. III, ԺԸ, էջ 346։

62 Նույն տեղում. III, ԺԸ, էջ 348։

63 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 71։

64 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 135։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСТОРИИ РОДА АРЦРУНИ (В 30—60-е ГОДЫ IX ВЕКА)

В. М. ВАРДАНЯН

Резюме

По сообщению византийского историка Генесия, в 838 году войско князей Арцруни в составе аббасидских войск участвовало в нашествии на Византию. Вообще аббасидские халифы вели враждебную политику против армянских нахараров, однако нельзя игнорировать тот факт, что именно при Аббасидах Арцруни приобрели политический приоритет в юго-западной Армении. В противовес Мамиконянам, они вошли в союз с Аббасидами против Византии. В южной Армении приоритет Арцруни признавали армянские Багратиды. Однако при изменении ситуации Аббасиды резко меняли отношение к Арцруни и другим князьям Армении. Это было результатом новой политики, направленной против автономных прав местных армянских князей. В 851 г. военачальник халифа Буга пленил и сослал в Самарру великого князя Ашота Арцруни; в то же время он выдвинул второстепенных князей юго-западной Армении. Но в условиях постепенно усиливавшейся византийской опасности Аббасиды проявляли снисходительность к армянским князьям, в том числе к Арцруни. В 858 г все они вернулись из плена, кроме бывшего первопрестольного князя Ашота. Последний вновь получил от Аббасидов титул великого князя Арцруни и был вынужден со своей дружиной до 868 г. оставаться в резиденции халифа и воевать против его врагов. По возвращении Ашот Арцруни вынужденно вел войны против соседних эмиратов. Он старался изолировать влиятельного князя Гургена Апупелча, с которым имели союзнические отношения Таронские Багратиды. Тем не менее в борьбе против арабских эмиров и даже против Ашота Багратуни Гурген Апупелч содействовал Ашоту Арцруни и его сыну Деренику.